ՍԻՍԱՋԱՆ ԵՎ ՆԱԽԿՈՐՁԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Հ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Սիսաջան - *Արաբական աղբյուրներում ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Սիսաջան (իմա՝ Սիսական) քաղաքի մասին: Ցակուտ ալ-Համավին հաղորդում է, որ արաբական բանակը՝ Հաբիբ իբն-Մասլամայի գլխավորությամբ, Հայաստան կատարած արշավանքի ժամանակ գրավեց Սիսաջան քաղաքը, որը գտնվում էր Դվինից 16 փարսախ հեռավորության վրա: Քաղաքի բնակիչները հաշտություն խնդրեցին և պարտավորվեցին հարկ վճարել խալիֆ Օթման իբն-Աֆանին*[1]:

Իբն-Հաուկալը հայտնում է, որ «Սիսաջանը միջին մեծության հաճելի քաղաք է, Սիսաջանից Դաբիլ՝ 16 փարսախ է»[2]: *Ալ-Իսթահրու աշխարհագրական երկում Սիսաջան է կոչվում Պարտավ-Դվին մայրուղու կայաններից մեկը. «Բերդաայից Կալկատուս՝ 9 փարսախ, Կալկատուսից Մետրիս՝ 13, Մետրիսից Դավմիս՝ 12, Դավմիսից Կիլ-կուլ՝ 16, Կիլ-կուլից Սիսաջան՝ 16 և Սիսաջանից Դաբիլ՝ 16 փարսախ»*[3]:

Արաբ այլ հեղինակներ (իբն-Խորդադբեն, Կուդամա, ալ-Մուքադասի) կայանների միջև եղած հեռավորությունը տալիս են անցումներով[4]:

Հուդուդ ալ-Ալամի հեղինակը գրում է. «Սիսական (իմա՝ Սիսաջան) քաղաք է, որն ունի մեծ մարզ և Սմբատի թագավորությունն է» :

Բերված տեղեկություններից երևում է, որ Սիսաջանի նույնացումը Սյունիքի Ծղակք գավառի տարածքում գտնվող Սիսական (Վաստակաշատ, Վասակակերտ)[5] *բերդաքաղաքի հետ բացառվում է, քանի որ դա հակասում է արաբական աղբյուրների տվյալներին: Տվյալ դեպքում խոսքը մի քաղաքի մասին է, որ տեղադրված էր Պարտավից դեպի Դվին տանող ճանապարհին: Այդ մայրուղու ուղղության, դրա կայանների տեղադրության և անվանումների ծագման մասին կան մի քանի տեսակետներ: Ըստ Ց.Մարկվարտի, Սիսաջան և Գեղաքունի կայանները գտնվել են համանուն գավառների մուտքի մոտ և այդ պատճառով կոչվել են նրանց անուններով: Հեղինակի կարծիքով, կայանների հաջորդականությունը խախտված է: Նա գտնում է, որ Դվինից հետո առաջինը եղել է Գեղաքունին, այնուհետև՝ Սիսաջանը: Ց.Մարկվարտը որոշել է ուղին՝ անցկացնելով Սևանա լճի ափով:*

---

[1] *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ Հ.Թ.Նալբանդյան, Ե., 1965, էջ 92:*

[2] *Сведение арабских географов IX – X веков по р. Хр. О Кавказе, Армении и Азербайджане – Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ СМОМПК), Тифлис, 1908, вып. XXXVIII, с. 101 – 102.*

[3] *СМОМПК, Тифлис, 1901, вып. XXIX, с. 33.*

[4] *СМОМПК, Тифлис, 1903, вып. XXXII, с. 11, 29, вып. XXXVIII, с. 12.*

[5] *Հ.Փափազյան, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (ՀՍՍՌ Գա Տեղեկագիր Հաս./գիտ., 1953, № 5, էջ 79):*

[6] *Ա.Ղարագյոզյան, Վասակաշատի տեղադրությունը [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1986, № 2, էջ 238 - 241]:*

Գեղաքունին տեղադրել է Դվինից 16 փարսախ, իսկ Սիսաջանը՝ դրանից նույնքան հեռավորության վրա :

Հ.Մանանդյանը անընդունելի է համարում Յո.Մարկվարտի տեսակետը: Գիտնականի համոզմամբ, ճանապարհի ուղղության հարցում իրավացի է Ն.Կարաուլովը, որի կողմից Սիսաջանի նույնացումը Կիսաջանի հետ Հ.Մանանդյանը համարել է առավել նախընտրելի՝: Հ.Մանանդյանի եզրահանգմամբ, նույնիսկ այդ վարկածը անընդունելի լինելու դեպքում, ակնհայտ է, որ Սիսաջանը գտնվել է Բաշ-Նորաշեն-Առափա հատվածում Շարուրից Վայոց ձոր տանող ճանապարհին: Նա Սիսաջան անունը կապում է Սյունիքի Սիսական անվան հետ :

Հ.Փափազյանի կարծիքով, Սիսական քաղաքը «գտնվել է մոտավորապես այժմյան Բաշնորաշենի մոտ Նախիջևանի ԱՍՍՌ» :

Թ.Հակոբյանը Սիսաջանի տեղորոշման հարցում նախապատվությունը տալիս է Յո.Մարկվարտի տեսակետին: Նրա կարծիքով, այդ անվանումը առաջացած պետք է լինի այն իրողությունից, որ տրված կետերում մայրուղիները հատող երկրորդական ճանապարհները տանում էին դեպի համանուն գավառները: Թ.Հակոբյանը ենթադրաբար Սիսաջանը տեղադրում է այժմյան Արենի գյուղի տեղում, որն ըստ նրա, միաժամանակ եղել է գլխավոր ճանապարհի վրա գտնվող կայան : Վայոց ձորի տեղանքի ուսումնասիրությունը Բ.Հարությունյանին բերել է այն եզրակացության, որ Սիսաջանը տնհրաժեշտ է փնտրել հնագույն Վայս ամրոցի շրջակայքում: Նրա ավերակները հայտնի են Վեյսալի-կալասի անունով և գտնվում են Տանձիկ գյուղի մոտակայքում՝: Բալաձորին արաբական զորքերի՝ դեպի Սյունիք կատարած արշավանքի ժամանակ հիշատակել է միայն Վայս ամրոցի գրավման մասին, հետևաբար, Բ.Հարությունյանի համոզմամբ, Սիսաջանի մասին Յակուտ ալ-Համավիի վկայությունը նույնպես վերաբերում է հիշյալ ամրոցին: Արաբները, ինչպես այնուհետև նշում է Բ.Հարությունյանը, ամրոցը Սիսաջան են կոչել կամ այդտեղ ապրող սյունեցիների (սիսականցիների), կամ նահանգի անունով: Վերջին ենթադրությունը նա համարում է առավել հավանական: Հօգուտ այդ տեղորոշման, Բ.Հարությունյանը կարևոր փաստարկ է համարում այն, որ Դվինից մինչև Վայս ամրոցը եղած հեռավորությունը կազմում է 90 - 92 կմ (կամ 16 արաբական փարսախ) :

---

[7] J. Markwart, Das Itinerar von Artaxata nach Armastica, Wien, 1928, S 28:

[8] Սիսաջանը չի կարող նույնացվել Կիսաջանի հետ այն պարզ պատճառով, որ վերջինս տեղադրված էր Պարտավ-Դվին ճանապարհից դուրս: Բացի այդ, այս երկու կետերի՝ Դվինի և Կիսաջանի միջև եղած հեռավորությունը կազմում է 66 կմ, որը չի համապատասխանում արաբական 16 փարսախին, հետևաբար չի հաստատվում նաև արաբ հեղինակների տեղեկություններով:

[9] Հ.Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեվտինգերյան քարտեզի, Ե., 1936, էջ 194 - 195:

[10] Հ.Փափազյան, նշվ. աշխ., էջ 84, ծան. 64:

[11] Թ.Խ.Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Ե., 1966, էջ 91 - 92:

[12] Բերդատեղին տեսել և նկարագրել են Ե.Լալայանը և Գաջունին: Հետազոտվող հարցը լուսաբանելիս Բ.Հարությունյանը հենվել է նրանց ուղեգրությունների վրա (տե՛ս Բ.Հարությունյան, Դվին-Պարտավ ճանապարհի Sisajan - Gelakuni գծամասը (ՊԲՀ, 1968, № 1, էջ 208, ծան. 50): Նշված վայրում տեղանքը հետազոտելու ժամանակ ավերակների հետքեր չհայտնաբերվեցին:

[13] Բ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 217 - 218:

Դվին-Պարտավ ճանապարհի ուղղությունը քաջ հայտնի է: Այն անցնում էր Սյունիքի Վայոց ձոր, Դեղարքունիք և Սոթք գավառներով[14]: Եթե հիմք ընդունենք Դվինից Սիսաղան ընկած հեռավորությունը, ապա վերջինս թերևս պետք է փնտրել Տանձիկ գյուղի կամ Առփայի շրջակայքում: Սակայն դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ նշված վայրերում բացակայում են հնագույն քաղաքի ավերակները: Ընդ որում, հաստատապես կարող ենք ասել, որ այդ ճանապարհին գտնվող միակ հնագույն քաղաքը տեղադրված էր Շարուրի դաշտում, Վայոց ձոր գավառի մուտքի մոտ, Դվինից մոտ 75 կմ հեռավորության վրա: Ա.Այվազյանը այն համարել է աղբյուրներում վկայված Արբա բերդը, որի մասին գրում է. «Արբա բերդի ավերակները գտնվում են Նախիջևանի պատմական Շարուր... դաշտի Նորաշեն (Ուլյա Նորաշեն)... գյուղի մոտ, Արփա գետի աջ ափին: Այս բերդը կառուցված է Արփայի լեռնանցքի մուտքի առջև տարածված ընդարձակ հովտի հյուսիսային մասում վեր խոյացող շրջանաձև լեռնագագաթի վրա: Արբա բերդն իր գրաված դիրքով գտնվում էր Արաքսի հովտից դեպի Արփա գետի ավազանը բարձրացող կարևոր առևտրական տարանցիկ մայրուղիների նշանավոր հանգուցակետերի վրա: Դրա շնորհիվ Արբա բերդի հսկողության տակ են գտնվել Արփայի լեռնանցքը, Շարուրի դաշտի մեծ մասը, շրջակա բնակատեղիները և հին Հայաստանի առևտրական երթուղիների մի մասը: Լեռը, որի վրա կառուցված է Արբաս բերդը, իր գագաթնամասում ունի մոտ 1 հա հարթ տարածություն, ուր ժամանակին եղել են միջնաբերդը և շրջապատող պարսպաշարքերը: Միջնաբերդից բացի այլևայլ շինությունների մի քանի տասնյակ (50 - 60) ավերակներ կան նաև լեռնագագաթի մյուս մասերում, որոնք ունեն քառանկյուն և ուղղանկյուն հատակագծեր:

Համեմատաբար լավ են պահպանվել Արբա բերդի պարիսպները: Այժմ պարիսպների պահպանված մասերը տեղ-տեղ ունեն 20 - 30 մ երկարություն և 1 - 2,5 մ բարձրություն: Արբայի պարիսպների հիմքերի քարերը ունեն 1,5 -2,5 մ երկարություն և 1,5 մ միջին բարձրություն: Նման մեծ քարերով կառուցված պարիսպները ունեն անշաղախ չարվածք հարմար կապակցումներ: Բերդի պաշտպանության հուսալիությունը ապահովվել է

---

[14] Նույն տեղում, էջ 214 - 218:

[15] Առփա գյուղը գտնվում է այժմյան Արենիից 0,5 կմ դեպի արևմուտք: Այն «...եղել է թե ճանապարհի հանգուցակետ և թե Շարուրի դաշտից Վայոց ձոր մտնող կիրճը փակող ռազմական կետ: Այս պատճառներով էլ գյուղը շրջապատող բարձունքների վրա հնում շինված են եղել բերդ և ամրոց, որոնց միայն ավերակներն են մնացել» (Դիվան Հայ վիմագրության, պրակ III, Ե., 1967, էջ 98): Անտարակույս «հին «Առփա»-ի ավերակները.... ոչ թե սովորական գյուղի, այլ ավելի շուտ բերդագյուղի տպավորություն են թողնում» (Թ.Խ.Հակոբյան, նշվ. աշխ., էջ 91): Վերջինս իրավացիորեն նույնացնում է Արփանյալի հետ (Ս.Տ.Երեմյան, Հայաստանը ըստ Աշխարհացույցի», Ե., 1963, էջ 41):

Առփայից դեպի Ամաղու և Խաչիկ գյուղերը տանող ճանապարհի աջ կողմում, մոտավորապես 2 կմ հեռավորության վրա, երկու ձորերի միջև բարձրացող լեռան գագաթին եղել է բերդ, որի հետքերն են այժմ նշմարվում: Այդ նախկին ամրոցը նույնանում է Հրասեկա բերդի հետ՝ Նորավանքի հարևանությամբ գտնվելու պատճառով, որի մասին ակնարկում է Սյունյաց պատմիչը. «Այս Յովհաննէս յետ աւերման իւրոյ աշխարհին, բազումս ալեկոծեալ այսր անդր, եկն ի Վայոց ձոր գաւառ և կամեցաւ բնակել ի խորաձոր անապատին Նորավանից, մերձ անառիկ դղեկին Հրասեկայ բերդոյն, առ հիազօր եւ մեծասքանչ եկեղեցւոյն սրբոյ Կարապետին» (Պատմութիւն Նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 348):

եռաշարք պարիսպների օգնությամբ, որոնց անկյունային հատվածներում եղել են որմնահեցեր և աշտարակներ: Արբայի շինարվեստի շատ կողմեր հիշեցնում են ուրարտական շինարվեստը, որը տակավին մ.թ.ա. 8 - 7-րդ դարերում վերակառուցվել է ուրարտական բերդերին հատուկ հատակագծով, որոնք պայմանավորված էին սոցիալական շերտավորվածությամբ: Այդ տեսակետից հետաքրքիր է բերդի երկմաս հատակագիծը: Միջնաբերդը չորս կողմից պաշտպանվել է պարիսպներով, որոնց փեշերին, լեռան ստորին լանջերում փռված են բուն բերդաքաղաքի բազմասենյակ շինությունները, որոնք ևս, իրենց հերթին, պաշտպանվել են պարսպաշարքերով: Միջնաբերդի շինությունների իշխող տեղում, դեռևս 20-րդ դարի 30-ական թվականներին հայտնաբերվել են ճարտարապետական շինության խարիսխներ՝ անհերքելի ապացույցն այն բանի, որ միջնաբերդի իշխող հատվածում ժամանակին կառուցված է եղել պալատ կամ պաշտամունքային կոթող:

Արբա բերդի ավերակների շինարարական տեխնիկան վկայում է, որ այս բերդն իր նախնական ծնունդով կիկլոպյան շրջանի՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերի հուշարձան է, որը մոտավորապես մ.թ.ա. 8-րդ դարում վերակառուցվել է ուրարտացիների կողմից ու երկար ժամանակ ծառայել նրանց»[16]:

Ոչ մի փաստ չկա այն մասին, որ այս ավերակ բերդաքաղաքը Արբան (իմա՝ Արփանյալ) է: Վերջինիս տեղադրությունը ստույգ հայտնի է: Այդ մասին արդեն խոսվել է: Հարկ է նշել, որ բլուրը, ամրոցի մնացորդներով, այժմ կոչվում է Կարա-Թեփե: Տեղանքի հետազոտությունը ցույց է տալիս, որ հատկապես լավ պահպանվել են հարավ-արևմտյան, հարավային և հյուսիս-արևելյան հատվածների պարիսպները: Առավել պարզ արտահայտված է հարավ-արևմտյան հատվածը: Այն բաղկացած է 2 կիսաշրջանաձև աշտարակներից, որոնք միացված են պատերին ուղղահայաց հատվածներով: Աշտարակների միջև եղած պարիսպների կտրվածքը անկյուն է կազմում: Պարիսպները, որոնք կազմում են աշտարակների շարունակությունը հյուսիսում և հարավ-արևելյան հատվածներում, շրջափակում են լանջի այդ հատվածը:

Ներքին աշտարակի պատերը, բեկման անկյունի հետ միացված են եղել մեկ այլ պատի, որի հետքերը պահպանվել են մինչև 180 մ երկարությամբ: Աշտարակները կառուցվել են կրկնակի շրջանաձև պատերով, որոնց միջև եղած միջին հեռավորությունը կազմել է 2,5 մ:

Աշտարակների արտաքին պատերը կառուցված են եղել բազալտե հսկայական զանգվածներից (միջին չափերը 2 X 1,1 մ, իսկ հաստությունը 2,17 մ): Պահպանված պատերի առավելագույն բարձրությունը 3,5 մ է: Աշտարակների արտաքին և ներքին պատերը շարված են առանց շաղախի՝ տաշված քարերով: Աշտարակների շարունակությունը կազմող պատերը քարե փոքր զանգվածներ են՝ շարված նույն սկզբունքով: Աշտարակներն ու պատերը կառուցված են տեղանքի առանձնահատկությունը հաշվի առնելով: Ուսումնասիրված կառույցների ամբողջ պատերի ընդհանուր երկարությունը 77,5 մ է:

Պարիսպների հետքեր են պահպանվել բլրի ինչպես հարավ-արևելյան հատվածի մասերում, այնպես էլ գագաթի մոտակա տարածքում: Հյուսիս-

---

[16] Ա.Այվազյան, Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Ե., 1978, էջ 63 - 64:

արևելյան վերին աշտարակից 5 մ հեռավորության վրա պահանված է չինության մի անկյուն և պարսպի մի հատված՝ նույն շարվածքով[17]:

Կարծում ենք, որ Կարա-Թեփե բլրի վրա տեղադրված հնագույն բերդաքաղաքը Մարակերտն է, որի հիմնադրումը, ըստ Գողթան երգիչների, վերագրվում է Արտավազդին՝ հայոց Արտաշես 1-ին թագավորի որդուն: Մովսես Խորենացին այդ մասին գրում է. «Այլ և Արտաւազդայ ոչ գտեալ, ասեն, քաջի որդւոյն Արտաշիսի, տեղեկիկ Ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց, ասէ, գնաց և չինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ, որ է դաշտին՝ որ անուանեալ կոչի Շարուրայ»[18]: Ասվածի հաստատումը գտնում ենք «Աշխարհացույցում», որտեղ տրված է Մարակերտ-Մարավանի տեղադրության ճշգրիտ նկարագրությունը. «Շարուր դաշտն, ընդ որ հոսի գետն Արփանեալն, առ Մարաւանայ քաղաքով, անցանելով ի Հարաւ՝ խառնի յԵրասխ»[19]:

Ամփոփելով բերված նյութը՝ կարելի է արձանագրել այն փաստը, որ արաբ հեղինակները Սիսաջան են անվանել Սյունիքի մերձակա տարածքում Շարուրի դաշտում, կառուցված Մարակերտ կամ Մարավան քաղաքը՝ իր տեղադրության պատճառով: Ընդ որում, Սիսաջան-Մարավանի և Դվինի միջև եղած հեռավորությունը (ուղիղ գծով 75 կմ) կարող է համապատասխանել 16 արաբական փարսախ կազմող բնական ճանապարհին: Սիսաջանի աշխարհագրական դիրքը բացառում է նրա պատկանելությունը Սյունիքին: Սակայն, հիմնվելով Հուդուդ ալ-Ալամի նշված տեղեկության վրա՝ Հ.Փափազյանը հայտնել է այն կարծիքը, թե «խոսքը Սյունյաց գահերեց իշխան Սմբատի մասին է, որը 970թ. թագավոր էր օծվել, և նրա թագավորությունը ճանաչվել էր Սամանիդյան թագավոր Նուհ-իբն Նասրի կողմից»[20]: Այս պատկերացումը մտորումների տեղիք է տալիս, նախ՝ Սյունիքի թագավորության հիմնադրման տարեթվի շուրջ կան տարակարծություններ[21]: Առայժմ ընդունելի է համարվում 987թ.[22]: Այդ տարեթիվը հիմք ընդունելու դեպքում ժխտվում է հիշյալ տեսակետը, քանի որ Հուդուդ ալ-Ալամի հեղինակը իր աշխատությունը սկսել էր գրել 982թ.[23], երբ Սյունյաց գահերեց իշխան Սմբատը դեռևս չէր օծվել թագավոր: Անկախ այդ հանգամանքից, տարածքային պատկանելության առումով, որքան հայտնի է, Սյունյաց Սմբատ թագավորի տիրույթների կազմում Շարուրի դաշտը ընդգրկված չի եղել: Սկզբնապես Սյունիքի թագավորության սահմաններից դուրս էին մնացել Գեղամա լճի շուրջը գտնվող գավառները, իսկ հետագայում՝ նաև Վայոց ձորն ու շրջակա գավառները, որոնք գրավվել էին Սմբատ II Բագրատունու (977 - 990) և Գագիկ I-ի (990 - 1020) օրոք:

---

[17] Տեղանքի հետազոտությունը կատարել ենք Ճարտարապետ Արա Զարյանի հետ: Գտածո նյութերը, հիմնականում խեցեղենի բեկորներ, ըստ հնագետ Հ.Ավետիսյանի, վերաբերում են Վանի թագավորության ժամանակաշրջանին և IX-XIդդ.:

[18] Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 84:

[19] Ս.Տ.Երեմյան, նշվ. աշխ., էջ 111: Հարցի վերաբերյալ առաջին անգամ արտահայտվել է Ս.Տ.Երեմյանը: Նա գտնում է, որ Մարավանը «պիտի փնտրել այժմյան Նորաշենի տեղում» (նույն տեղում, էջ 65).

[20] Հ.Փափազյան, նշվ. աշխ., էջ 85, ծան. 65:

[21] Մանրամասն տե՛ս Բ.Հարությունյան, Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթվի հարցի շուրջը (Բանբեր Երևանի համալսարանի, 1969, № 1, էջ 145 - 153):

[22] Հայ ժողովրդի պատմություն, հ. III, ե., 1976, էջ 114 - 116:

[23] Հ.Փափազյան, նշվ. աշխ., էջ 73:

Պատմիչի հավաստմամբ, Գագիկ I Բագրատունին «տիրեաց յոլով բերդից և գաւառաց ի սահմանաց Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ առաւել քան զեղբայր իւր»[24]: Որոշ տվյալներից երևում է, որ Բագրատունիների վերահսկողության տակ էին անցել նաև Սյունիքի Շղուկք, Հաբանդ, Աղահեճք գավառները : Հետևաբար, հավանական է, որ Հուդուդ ալ-Ալամի տեղեկությունը վերաբերում է ոչ թե Սյունյաց Սմբատ թագավորին, այլ Սմբատ II Բագրատունուն:

Նախկորզան - Վաղ միջնադարյան Սյունիքի ոչ այնքան հայտնի քաղաքներից է: Տեղական ավանդության համաձայն, նրա հիմնադրումը վերագրվում է Սյունյաց Անդոկ իշխանի որդի Բաբիկին: Ըստ սկզբնաղբյուրի, Անդոկը, նվաստացած պարսից Շապուհ թագավորից, որ արքունիքում խնջույքի ժամանակ իրեն հատկացվել է 14-րդ տեղը, որոշում է վրեժխնդիր լինել: Խազարների դեմ պատերազմի ժամանակ, պարսից արքային օգնելու պատրվակով, նա 1700 հեծյալներով ժամանում է Տիզբոն: Իր զորքը թողնելով դարանում նա փոքրաթիվ ջոկատով մտնում է քաղաք, ուր նրան դիմավորում են մեծ շուքով: Գիշերը Անդոկը իր զորքերին գաղտնի նշան է տալիս: Արևածագին, քաղաքի դարպասները բացվելուն պես, զորքը խուժում է ներս և ավարի ենթարկում քաղաքը: Վերադառնալով Սյունիք՝ իշխանը ամրանում է Բաղաբերդում, որը շուտով պաշարվում է պարսիկների կողմից: Սակայն, չկարողանալով գրավել Բաղաբերդը, նրանք սկսում են կողոպտել ու ավերել Սյունիքի գավառները: Անդոկ իշխանը, հարմար պահ գտնելով, թողնում է բերդը և մեկնում Բյուզանդիա: Անդոկի մահից հետո նրա որդին՝ Բաբիկը, անցնում է ծառայության Շապուհ արքայի մոտ՝ ուրիշի անվան տակ: Շուտով նա հռչակվում է իր խիզախությամբ: Հոների հետ պատերազմի ժամանակ Բաբիկը մենամարտի է բռնվում նրանց առաջնորդ Հոնագուրի հետ և հաղթում նրան: Դրա դիմաց պարսից թագավորը վերադարձնում է նրան իր նախնիների ժառանգությունը՝ Սյունիքը : Անդրադառնալով այդ իրողությանը՝ Մովսես Կաղանկատվացին տալիս է Նախկորզան տեղանվան իր մեկնաբանությունը. «Եւ եկեալ էանց ընդ Երասխ գետ և շինեալ զգեղ մի Նակորզ անուն, այսինքն է առաջին կորզեալ

---

[24] Տիեզերական պատմութիւն Ստեփաննոս վարդապետի Տարօնեցւոյ, Փարիզ, 1859, էջ 256:

Թ.Խ.Հակոբյան, Նշվ. աշխ., էջ 61 - 63:

[25] Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մ., 1860, էջ 82 - 85: Ըստ Փավստոս Բուզանդի, Բաբիկ Սյունին տոհմական տիրույթը ստացել էր Մանվել Մամիկոնյանի ձեռքից՝ Հայաստանում վերջինիս կառավարման շրջանում (378 - 384թթ.), «Եկին ապա և մնացորդք ի տանէն Սիւնեաց պատանեակ երեք մնացեալք ի կոտորածէն Պարսից առ զօրավարն Հայոց Մանուէլ և անուանք նոցա միւսումն Բաբիկ և միւսումն Սամ, միւսումն Վաղինակ: Եւ ընկալաւ զնոսա զօրավարն Հայոց Մանուէլ. եւ եղև նոցա օգնական, և դարձ արար նոցա յերկիրն իւրեանց և կացոյց տէր Բաբիկ ի վերայ երկրիս, և զերկուսն ևս ըստ իւրաքանչիւր չափու, և էր Բաբիկ նիզակակից զամենայն աւուրս կենաց նորա (Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832, էջ 250): Պատմիչը հաղորդում է նաև, որ դավաճան Մերուժան Արծրունու առաջնորդությամբ Հայաստան ներխուժած պարսկական զորքերի հետ Բագավանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում «...Բաբիկ տէր գաւառին Սիւնեաց հասանէր նիզակաւ ի վերուստ ի վայր ի կողին կարէր ընդ գետինն, և ոչ կարէր յառնել (Մերուժանը - Ա.Ղ.): Իսկ զօրապետն Մանուէլ իւր վարաւանդապասքն յերիվարն հանէին, և զՄերուժանայ զգլուխն ի բաց հատանէին (նույն տեղում, էջ 254):

ի Հայրենեացն»[27]: Նույնը հաղորդում է նաև Ստեփաննոս Օրբելյանը. «...Եւ անցեալ ընդ Երասխ գետ՝ չինէ գեղաքաղաք մի կոչելով զանուն տեղւոյն Նախկորզան, որ Թարգմանի նախ զնա կորզեալ առ յինքն յիւր Հայրենեաց»[28]:

Երկու պատմիչների վկայությունները ուշագրավ են նրանով, որ պարզություն են մտցնում Նախկորզանի տեղադրության հարցում. Երասխի ձախ ափին՝ պատմական Սյունիքի տարածքում, այնտեղ, ուր գտնվում էր գետանցը, որի մոտ հիմնվել էր քաղաքը: Պետք է նշել, որ XգՏաթևի վանքի հարկատու գյուղերի հին ցուցակում Նախկորզանը վկայված է Քաշունիք գավառում[29]: Տվյալ հանգամանքը ավելի որոշակի է դարձնում նրա տեղորոշումը: Այդ կապակցությամբ հատկապես կարևոր է «Աշխարհացոյց»-ի ցուցումը, որը Սյունիքի տասներկու գավառների թվարկումից հետո ավարտվում է հետևյալ խոսքերով. «...մինչև ցՆախկորզան քաղաք, անցն իւր ...Աղաւնոյ գետ»[30]:

Համադրելով բերված տեղեկությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ քաղաքը տեղադրված էր Երասխի ձախ ափին՝ Սյունիքի Քաշունիք գավառի տարածքում, նահանգի արևելյան սահմանը հանդիսացող Աղավնո գետի ստորին հոսանքի հովտում[31]:

Հարցի վերջնական պատասխանը գտնում ենք Ստեփաննոս Օրբելյանի «Պատմության» հետևյալ տողում. «...շրջանս գետոյն Աղաւնոյ, հանդեպ եկեղեցւոյն Նախկորզանու...»[32]:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Նախկորզանը տեղադրված էր Աղավնո գետի աջակողմյան մասում, գետաբերանի մոտ, ուր մինչև Արաքս թափվելը, այն, աղեղ գծելով, առաջացնում է բազմաթիվ գալարներ: Ոչ հեռու անցյալում այստեղ եղել է Շարիֆան անունով բնակավայր, որը համապատասխանում է Նախկորզանին: Շարիֆանից արևելք Աղավնո գետանցն է, որը ձգվում է մինչև Արաքսի Խավալինյան ծանծաղուտը[33]:

Արաքս գետի վրա հիդրոհանգույցի շինարարության կապակցությամբ 1980թ. Ադրբ. ԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արշավախումբը հետազոտել է քաղաքատեղին: Հուշարձանի սահմանները ճշտելու և շերտագրությունը որոշելու նպատակով արվել են երկու փորվածք և բացվել մի քանի հետախուզահոր: Պարզվել է, որ մշակութային շերտի հաստությունը կազմել է 2.00 - 2.75 մ: Հայտնաբերվել են մետաղամշակման արտադրության մնացորդներ (թուջերկաթներ, երկաթե առարկաներ), խեցեղեն, ապակե

---

[27] Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն, էջ 85:

[28] Ստեփաննոս Օրբէլեան, էջ 40:

[29] Նույն տեղում, էջ 519:

[30] Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յավելուածովք նախնեաց. Վենետիկ, 1881, էջ 33:

[31] Ս.Երեմյանը հայտնել է այն կարծիքը, որ «Պիտի գտնվեր Երասխ գետի ձախ ափին Խուդափեռիների կամուրջի մոտ: Այս կամուրջի վրայով ճանապարհը գնում էր լեռնային դժվարին տեղանքով (Համդալլահ Ղազվինին կոչում է Arminijan), իջնում դեպի Ահար քաղաք, այնտեղից դեպի Թավրիզ և Արդաբիլ» (Ս.Տ.Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի էջ 72):

Առաջարկված տեղորոշումը անընդունելի է, քանի որ այդ դեպքում Նախկորզանը հայտնվելու է Սյունիքին հարող տարածքում՝ Արցախում, մինչդեռ ըստ սկզբնաղբյուրների, այն անմիջականորեն գտնվել է Սյունիքում:

[32] Ստեփաննոս Օրբէլեան, էջ 86:

[33] Տե՛ս Карта Елизаветполской губернии, 1906.

իրեր, իրանական և չինական ծագում ունեցող ամանեղենի կտորներ, XVIIդ. պղնձե դրամ: Քաղաքատեղին կանխապես թվագրվել է XIII - XVIIդդ.[34]:

МЕСТОПОЛОЖЕНИЕ ГОРОДОВ СИСАДЖАН И НАХКОРЗАН

А.А.КАРАГЕЗЯН

Резюме

В арабских источниках содержатся интересные сведения о городе Сисаджан (арм. Сисакан). Это был один из пунктов дороги, ведущей из Партава в Двин, на расстоянии 16 фарсахов от Двина. Изыскания по определению местоположения Сисаджана показывают, что арабские авторы Сисаджаном называли город Маракерт-Мараван, расположенный в Шарурской равнине, у самого въезда в гавар Вайоцдзор провинции Сюник Великой Армении. Город Нахкорзан относится к числу малоизвестных нам городов Армении раннего средневековья. По местной традиции основание города приписывается Бабику, сыну сюникского князя Андока. В историко-географическом отношении определение местоположения Нахкорзана имеет особое значение, поскольку в "Армянской географии" он отмечен как ориентир для указания восточной границы провинции Сюник. Установлено, что Нахкорзан был расположен у устья р. Акера (Ахавно), в правобережной части, там, где до впадения в Аракс Акера образует многочисленные извилистые протоки.

---

[34] *Г.М.Ахмедов, Работы Худаферинской экспедиции, (Археологические открытия 1980г., М., 1981, с. 415).*